գաւորեցուցանեն զՆիկիփորոս. և նա գնացեալ 'ի Պուլղարս, և եսպան զնա Ֆռանկ ոմն. զի կասեաց սայլիւք զմատաղ մանկունս անողորմաբար. յորոյ ժամանակէ տէրութիւնն ինքնակալեցաւ 'ի յարևելեան կողմն, և ամենևին ոչինչ դարձաւ և պակասեաց:

Միխայէլ սկսաւ յամի Տեառն ՉԴ.Թ.- ինքնակալեալ ամս երկու. զոր թագաւորեցուցին զօրքն յետ Նիկիփորայ. և ինքն թագաւորեաց և էր ողորմած յոյժ. զի զորս Նիկիփորոս ագահութեամբ ժողովեաց, սա 'ի պատշաճաւոր տեղիս շնորհեաց, և խաղաղութեամբ մեռաւ: Մինչև ցաստ Ֆռանկքն ընդունէին զթագաւորութիւնն Կոստանդնուպօլսոյ. և աստի 'ի հետ փոխել առեն 'ի Ֆռանսա, (զոր ես յայսմ վայրի՝ նախ՝ գրեմ զԿոստանդնուպօլսոյն՝ ըստ կարողութեանս, և յետոյ գրեմ ըզՖռանգացն 'ի Քրիստոսէ թուին ՉԴ.Թ.- ամին ըստ համարագրական ոճոյն:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան